Արտատպված է՝ Շոլոմ-Ալեյխեմ, Վիպակներ և պատմվածքներ, Ե., Հայպետհրատ, 1964: Ռուսերենից թարգմանեց՝ Օլգա Սանահյանը:

ԽՈՐՀՐԴԻ ՀԱՄԱՐ

— Ահա երեք օր է, ինչ քեզ է հարցնում մի ինչ-որ երիտասարդ: Նա ասում է, որ իրեն խիստ անհրաժեշտ է քեզ հետ խոսել: Օրական մի քանի անգամ գալիս է:

Այդ, թող ներվի ասել, հրճվալից լուրը ինձ ասացին այն ժամանակ, երբ նոր էի վերադարձել ուղևորությունից:

Ես մտածեցի՝ «Հավանաբար մի հորինող է, որ գալիս է իր հորինածները հետը»:

Զանգը հնչեց, երբ ես հենց նոր էի նստել գրասեղանիս առջև և սկսել աշխատել:

Ահա դուռը արդեն բացեցին: Մեկը այնտեղ, նախասենյակում իրար է անցել: Հանում է կոշիկները: Հազում է: Փռշտում է: Այո՛, բոլոր նշաններից երևում է, որ «գրող» է: Դե, ինչ արած, կցանկանայի շուտով տեսնել այդ անձնավորությանը:

Եվ ահա նա, կամոքն աստծո, ներս է մտնում առանձնասենյակս:

Նա չափազանց սիրալիր ինձ բարևեց, ավելի ճիշտ, ինչ-որ բարդ ռևերանս արեց և, ձեռքերը շփելով, ներկայացավ: Ասաց իր անունը, այն անուններից, որոնք իսկույն և եթ գոլորշիանում են ձեր մտքից:

— Նստեցեք: Ինչո՞վ կարող եմ օգտակար լինել:

— Ես եկել եմ ձեզ մոտ մի հրատապ գործով, այլ կերպ ասած, այն գործը, որը ինձ բերել է ձեզ մոտ, չափազանց կարևոր է: Ասեմ ավելին. այդ գործը վերաբերում է իմ կյանքին: Ես կարծում եմ, որ միայն դուք կհասկանաք նրա էությունը: Ինչքան չլինի, գրող եք, շատ եք գրում և անշուշտ գիտեք՝ ինչն ինչոց է: Այլ խոսքով, կարողանում եք կշռել և գնահատել այն ամենը, ինչ տեղի է ունենում աշխարհում: Այո, ճիշտ այդպես եմ կարծում, այսինքն՝ ոչ թե կարծում, այլ հավատացած եմ, որ այդ այդպես է…

Ես նայում եմ այցելուիս: Դա տեղացի, լուսավորյալ մարդու, հորինողի տիպ է: Երիտասարդ է, գունատ դեմքով, սև, աղերսող աչքերով, որոնք պաղատագին ասում են. «Ողորմացե՛ք, միայնակ, մոլորյալ հոգուն»:

Ոչ, չեմ սիրում այդպիսի աչքեր: Ես վախենում եմ նրանցից: Այդպիսի աչքերում երբեք չեն լինում ծիծաղի կայծեր կամ ժպիտ: Նրանք մշտական նայում են խորքը: Ինձ երբեք դուր չեն գալիս այդպիսի աչքեր:

Ես մի կողմ եմ դնում գրիչս և ասում.

— Ապա, ցույց տվեցեք, թե ինչ ունեք դուք այդտեղ:

Սպասում եմ, որ իմ այցելուն ձեռքը կտանի թևի տակը և պտրտելով, այնտեղից դուրս կքաշի մի պատկառելի ձեռագիր: Միգուցե վեպ՝ երեք մասից, երկարաձիգ, ինչպես հրեական գաղթը: Բայց չի բացառված հնարավորությունը, որ դա կլինի չորս գործողությամբ ողբերգություն, ըստ որում, գործող անձինք կունենան այսպիսի անուններ՝ Մերդերզոն, Էրչիխման, Ֆրումհարց, Բիտերցվայգ[1] և նման անուններ, որոնք իրենք են ասում, թե ում հետ գործ ունեք...

---

[1] Մերդերզոն—մարդասպանի տղա: Էրչիխման—ազնիվ մարդ: Ֆրումհարդ—առաքինի հոգի: Բիտերցվայգ—դառը ոստ (հրեերեն):

Բայց հնարավոր է, որ դա եղած-չեղած միայն ոտանավորներ են Սիոնի մասին.

Այնտեղ, դեպ լեռներն է հոգին ձգտում,

Ուր արծիվների ճախրանքն է լսվում,

Ուր արմավենին է փթթում,

Մարգարեներն են հանգստանում՝

Աստծո իմաստնությունը փառաբանում:

Ես լավ եմ ճանաչում այդպիսի ոտանավորչիներին, ինձ ծանոթ են այդպիսի հանգերը, որոնցից ականջներդ զնգում են և աչքերիդ առջև շրջանակներ ու կետեր պտտվում: Եվ դատարկ, մի իսկական վայրի անապատ է դառնում ձեր հոգին նման ոտանավորներ կարդալուց հետո:

Միայն թե այս անգամ, պատկերացրեք, որ ես սխալվեցի: Երիտասարդը ձեռքը չտարավ թևատակը և ոչ էլ այնտեղից դուրս քաշեց ձեռագիր: Այստեղ վեպի, ողբերգության կամ էլ բանաստեղծության մասին խոսք անգամ չկար:

Ուղղելով վերնաշապկի օձիքը, հանգամանորեն կոկորդը մաքրելով, իմ այցելուն ասաց.

— Տեսնում եք, ես եկել եմ, որպեսզի սրտիս դառնությունը թափեմ ձեր առաջ, որպեսզի ձեզ հետ խորհրդակցեմ: Ես կարծում եմ, թե այնպիսի մի մարդ, ինչպիսին դուք եք, ի վիճակի է ինձ հասկանալ: Դուք այնքան շատ եք գրում, պետք է որ ամեն ինչ իմանաք և, հավանաբար, ինձ օգտակար խորհուրդ կտաք: Նախապես ասեմ, որ կանեմ այնպես, ինչպես որ խորհուրդ կտաք: Ես նույնիսկ ազնիվ խոսքով երդվում եմ… Բայց թե ներեցեք, միգուցե ես խլում եմ ձեր ժամանակը:

— Ժամանակը նշանակություն չունի: Պատմեցեք, ի՞նչ է պատահել ձեզ,— ասացի ես նրան, զգալով թե ինչպիսի հսկայական ծանրություն ընկավ վրայիցս:

Երիտասարդը ավելի մոտ նստեց սեղանին և սկսեց իր սրտի դառնությունը կամաց-կամաց դուրս թափել իմ առաջ: Սկզբում նա այդ անում էր հանդարտ, բայց հետո տարվեց ու խոսեց տաքացած:

— Ահա, տեսնո՞ւմ եք, ես ապրում եմ մի փոքրիկ ավանում: Ընդհանրապես ասած, մեր ավանը բնավ էլ փոքր չէ, ավելին կասեմ, դա մեծ ավան է: Դա համարյա քաղաք է: Բայց մեր այդ քաղաքը, ձեր քաղաքի համեմատությամբ դարձյալ մի ավան է: Սակայն նրա անունը ձեզ չեմ հայտնի: Դե ի՞նչ ասեք չի պատահում, հապա որ վերցնեք ու նկարագրեք: Իսկ դա մի շարք պատճառներով ինձ համար նպատակահարմար չէ… Հավանաբար դուք կցանկանայիք գիտենալ, թե ինչով եմ զբաղվում… Ընդհանրապես ասած, ես ոչնչով չեմ զբաղվում: Այլ կերպ ասած, ես առայժմ ոչինչ չեմ անում: Պարզ կասեմ, աներանցս տանն եմ սնվում, ոչ միայն սնվում, իհարկե, այլև ամեն ինչ գտնում եմ պատրաստի: Հապա ինչպես, նա նրանց միակ աղջիկն է, և մենք նրանցից ստանում ենք այն ամենը, ինչ մեզ պետք է: Նրանք դրանից չեն սնանկանա, նույնիսկ եթե մեզ մի տասը տարի էլ պահեն, որովհետև ունևոր մարդիկ են: Ուղղակի կասեմ, նրանք հարուստ են: Իսկ մեր փոքր ավանի համեմատությամբ, նույնիսկ մեծահարուստ: Կարճ ասած, մեզ մոտ նրանցից հարուստը չկա:

Իմ աներոջ մասին, դուք, իհարկե, որոշ բաներ լսած կլինեք: Բայց նրա անունը, համենայն դեպս, ձեզ չեմ հայտնի: Դա ինչ-որ չի սազում նրա դրությանը: Չնայած, մեր մեջ ասած, նա սիրում է, որպեսզի իր անվան շուրջը աղմուկ լինի: Զորօրինակ, Բոբրույսկի այրվածների համար ամենամեծ նվիրատվությունը նա արեց: Եվ Քիշինևի համար դարձյալ էլի նա էր ամենաշատ տվողը: Ինչ վերաբերում է մեր քաղաքին, ապա համարյա ոչինչ չի տալիս: Նա հիմար չի. նա լավ գիտի, որ իր քաղաքում առանց դրա էլ իրեն հարգում են: Ուրեմն, էլ ինչո՞ւ տա և դե, ախար ո՞ւմ առջև լոպազանա: Ահա հենց այդ պատճառով նա յուրայիններին քոռ կոպեկ էլ չի տալիս: Իսկ շռայլորեն նվիրում է միայն օտարներին, որոնք դեռ իմացած չեն լինում, որ նա այդպես բարի է: Այնուամենայնիվ, նա օտարների առջև էլ է մեռելի նման սփրթնում, երբ մի որևէ խնդիրքով կամ

նվիրատվության համար մոտն են գալիս: Այդպիսի մարդկանց երեսին, նա գոռում է. «Ըհը՛: Դուք եկել եք թալանելու: Հրե՛ս, համեցեք բանալիները: Գնացեք ինքներդ քանդրտեք պահարանները: Ունեցած-չունեցածս տարեք…»: Դուք, հավանաբար, կարծում եք, որ իսկապես բանալիները տալիս է: Ո՛չ, ներեցե՛ք, դուք սխալվում եք: Նրա բանալիները սեղանի դարակում են, փակի տակ: Իսկ սեղանի բանալին, նույնպես ինչ-որ տեղ է՝ փակի տակ… Ահա ինչպիսի մարդ է իմ աները: Իսկ ինչպիսին որ մարդն է, այնպիսին էլ նրա խոսքերն են: Մեր ավանում, մեր մեջ ասած, նրան խոզ են անվանում: Դե, իհարկե, ետևից: Իսկ ընդհանրապես երեսանց, քծնում են: Եվ այնպես էլ քծնում, որ սիրտս խառնում է: Իսկ նա գոհ է և ամեն ինչ հալալ յուղի տեղ է դնում: Տրորում է փորը և իր քեֆին ապրում: Այո՛, իհարկե, կյանքը հենց դա է որ կա: Հարց է առաջանում. մարդը ոչինչ չի անում, ապրում է յուղ ու մեղրի մեջ, լավ ուտում է, լավ քնում: Էլ ի՞նչ է նրան պետք: Քունն առնելով, վեր է կենում և հրամայում կառքը լծել ու զբոսնում է ցեխերի մեջ: Իսկ երեկոյան նրա մոտ հյուրեր են գալիս: Իսկ դրանք բոլորը համարյա քաղաքի տերերն են: Նրանք բամբասում են: Ինչե՛ր ասես, որ չեն դուրս տալիս: Ծիծաղում են համերկրացիների ու ամբողջ աշխարհի վրա: Հետո նրանց մատուցվում է մեծ ինքնաեռը: Եվ այդտեղ իմ աները անպայման նստում է ու մսավաճառ Շմուել-Աբեի հետ դոմինո է խաղում: Շմուել-Աբեն, պետք է ձեզ ասեմ, պեյսի[2] է պահում և չնայած դրան, ժամանակակիցներից է: Սպիտակ օձիքով, փայլեցրած սապոգներով, նա դեմ չէ ջահել կանանց հետ լեզուն բոշացնել, լավ երգում է, լրագիր կարդում, լավ խաղում է շախմատ ու դոմինո: Իսկ դոմինո, իմ աներոջ հետ նա կարող է խաղալ ամբողջ գիշեր: Իսկ դու նստիր ու նայիր, թե ոնց են խաղում: Կարելի է ասել, որ բերանս հորանջելուց պատռվում է: Ուզում ես սեղանից ելնել գնալ քո սենյակը ու մի գիրք վերցնել կարդալ: Չէ, ո՞նց կարելի է: Գնալը, երևում է, անպատշաճ է: Իմ աները դրանից խիստ նեղանում է: Նա այդ ժամանակ հնդկահավի նման փքվում է և դադարում հետդ խոսելուց: Նրան նայելով, զոքանչդ էլ է քեզ մարդ համարելուց դադարում: Եվ եթե ծնողները հաշտ չեն փեսայի հետ, ապա նրանց մինուճար զավակն էլ է, այսպես ասած, քիթը մի կողմ պտտում: Իսկ այդ զավակը մեծ կարծիք ունի իր մասին: Հապա ինչպե՛ս. նա ծնողների «աչքի լույսն է», և եթե մի փոքր վատ է զգում, իսկույն բժիշկ է հայտնվում, և ամբողջ տունը իրար է խառնվում: Եվ ինչ տարօրինակ բան կա, եթե մի այդպիսի արարած այն կարծիքին է, որ ամբողջ աշխարհը ստեղծված է միայն իր համար: Իսկ, մեր մեջ ասած, եթե նա հիմար չէ, ապա առանձնապես խելացի էլ չէ: Ո՛չ, երբ նա խոսում է, չի զգացվում, թե հիմար է: Դրան հակառակ, թվում է նույնիսկ, որ բացառիկ խելացի է: Բայց դա քանի՞ գրոշ արժի, եթե երես են տվել և դարձրել կապը կտրած մի վայրի այծ: Ամբողջ օրը նա կամ քրքջում է, կամ լաց լինում, իսկ, արդեն, եթե լալիս է, ապա լալիս է ոնց որ փոքր երեխան: Երբեմն նրան հարցնում ես. «Ինչո՞ւ ես լալիս: Ի՞նչդ է պակաս»: Ավելի շուտ պատը կպատասխանի, քան նա: Բայց դա դեռ փորձանքի կեսն է: Երբ որ կինս սկսում է լաց լինել, լալիս է այնքան ժամանակ, մինչև որ կամքը չեն կատարում: Ամբողջ չարիքը զոքանչս է: Աղջկա լացի վրա անմիջապես հայտնվում է: Հայտնվում է իր թուրքական շալը ուսերին: Ձեռքերն է ջարդում: Աղոթք ասելու նման ինչ-որ բաներ է բացականչում: Իսկ ձայնն էլ ասես տղամարդու ձայն լինի: Ձավակին հարցնում է. «Ի՞նչ է պատահել»: Ա՜խ, նորից քո այդ ավազա՛կը, բանդի՛տը, մարդասպա՛նը: Վա՛յ ինձ: Ամուսնու համար ինչ բան է «աչքի լույսը»: Իսկ ինչ է արել ամուսինը, նրա արյո՞ւնն է թափել»: Այդտեղ զանազան խոսքեր են թափվում նրա հասցեին, ինչպես բաց ջվալից: Եվ ինձ թվում է, որ նրա լեզուն երբեք դադար չի առնելու, նրա խոսքերից սկսում եմ ինձ վատ զգալ, սիրտս ճմլվում է, հոգիս տխրում: Ճիշտն ասած, երբեմն ինձ մոտ մի վայրի ցանկություն է առաջ գալիս՝ վրայից քաշել նրա շալը, ձեռքերով ճմրթել, գցել ոտքերիս տակ և նույնիսկ պատառ-պատառ անել: Չնայած, իհարկե, եթե սառը դատենք, շալն այստեղ ի՞նչ մեղք ունի: Շալը սովորական շալ է, որ սովորաբար բերվում է Բրոդից: Հավանաբար տեսած կլինեք այդ թուրքական շալերը: Դրանք վանդականախշ են, պտավոր և բոլորքը ծոպեր ունի…

Այդտեղ ես ընդհատում եմ երիտասարդ այցելուիս և խստորեն ասում.

— Ներեցեք, բայց չէ՞ որ դուք եկել էիք ինչ-որ գործի մասին ինձ հետ խորհրդակցելու:

Այցելուն ծանրումեծ շունչ է քաշում:

---

[2] Քունքերի մազեր. հրեական կրոնի համաձայն արգելվում էր կտրել քունքի և մորուքի մազերը:

— Ա՛խ, ներեցեք ինձ,— ասում է նա,— ես, կարծեմ խլում եմ ձեր ժամանակը: Բայց այս ամենը չափազանց կարևոր է, այսինքն՝ այն, ինչ պատմում եմ: Դուք պետք է մի քիչ ծանոթանաք տան և այնտեղ ապրող մարդկանց հետ, միայն այդ ժամանակ դուք լիովին կհասկանաք իմ դրությունը և իմ գործը…Հա՛, ուրեմն, հայտնվում է զոքանչս՝ շալը ուսերին: Եվ այդտեղ նրան թվում է, որ յուր զավակը, աստված ոչ անի, իրեն վատ է զգում, որ նա այնքան էլ առողջ չէ: Այդ ժամանակ գործի մեջ է խառնվում նաև աներս: Նա կարգադրում է կառքը լծել և մարդ ուղարկել բժշկի ետևից: Ուղարկում է «նոր բժշկին» կանչելու, հենց այդպես են անվանում մեզ մոտ մի բժշկի, գրողի ծոցը գնա նա: Նրա անունը ձեզ չեմ հայտնի որոշ նկատառումով: Եվ ահա ուղարկում են այդ բժշկի ետևից: Եվ հենց այստեղից է սկսվում այդ ամբողջ պատմությունը, որը ես կցանկանայի ձեզ անել, լսելու համար ձեր խորհուրդը…

Իմ այցելուն մի որպե ընդհատում է իր խոսքը: Նա թաշկինակով մաքրում է քրտնած դեմքը և աթոռը մոտեցնում իմ աթոռին: Կան մարդիկ, որոնք անպայման ձեռքերի մեջ պետք է ունենան մի որևէ առարկա: Այլապես նրանք չեն կարողանա պատմել: Իսկ իմ գրասեղանի վրա շատ կան զանազան բաներ, ինչպես նաև հեծանիվի տեսքով սիգարեթ լցնելու մի փոքրիկ մեքենա: Եվ ահա իմ այցելուին հենց դա գրավեց: Սկզբում երբ պատմում էր, նայում էր միայն հենց այդ առարկային, հետո ձեռքը վերցրեց և սկսեց ակները պտտել: Մի խոսքով, այդ ամբողջ ընթացքում, ինչ նա խոսում էր, մեքենան նրա ձեռքին էր:

— Ահա ուրեմն,— նորից խոսեց նա,— ուղարկում են նոր բժշկի ետևից: Իսկ մեր ավանում բժիշկները շնից շատ են: Կան և՛ ռուս բժիշկներ, և՛ հրեաներ, և՛ բժիշկ սիոնականներ, այսինքն՝ որոնք սիոնականությամբ են զբաղվում: Բայց այս բժիշկը, որի մասին ես ձեզ պատմում եմ, բոլորովին ջահել է և տեղացի դերձակի տղան է: Այլ կերպ ասած, նրա հայրիկը մի ժամանակ դերձակ էր: Բայց հիմա, իհարկե, այլևս դերձակ չէ: Ինչո՞ւ լինի դերձակ, եթե տղան բժիշկ է: Ավելի ճիշտ՝ ինչո՞ւ բժիշկ տղան ունենա դերձակ հայր: Հայրիկից ասենք մի երկու խոսք, որպեսզի նրա մասին էլ պատկերացում ունենաք… Դա մի շատ կոլոտ մարդ է, աչքերը շիլ, աջ ձեռքի մատն էլ ծուռ: Ման է գալիս միշտ երկար փեշավոր բամբակե կապայով: Իսկ ձայնն էլ ասես ճռիկի ձայն լինի: Զօր ու գիշեր ճռռում է, հա՛ ճռռում, իր տղայի մասին է պատմում. «Իմ բժիշկը երեկ պրակտիկա ուներ, այն էլ ի՜նչ պրակտիկա, իմ բժիշկը ամեն ինչ կարող է, իմ բժիշկը…»: Այդ դերձակը ամենքի գլուխը տանում է իր բժշկով: Այդ էլ ասեմ, որ, ի դժբախտություն ամբողջ քաղաքի, նրա տղան կանացի հիվանդությունների բժիշկ է: Այլ խոսքով ասած, մանկաբարձ: Եվ եթե ինչ որ մեկը այդ հարցում որևէ գաղտնիք ունի, ապա դերձակը այդ գաղտնիքը զրնգացնում է աշխարհով մեկ: Կարճ ասած, վայ այն կնոջը կամ աղջկան, որը կընկնի այդ բժշկի ձեռքը և նրա դերձակ հայրիկի լեզվի տակ: Մեզ մոտ մի աղջիկ կար…

Ես նորից եմ ընդհատում իմ այցելուին.

— Ներեցեք, երիտասարդ, բայց դուք ցանկանում էիք ձեր գործի մասին պատմել:

— Ա՛խ, ներեցեք,— ասում է նա,— ես զգում եմ, որ ձեր ժամանակը խլում եմ: Բայց ինչպես անեմ: Չէ՞ որ ես պետք է ձեզ պատմեմ այն բժշկի մասին, որը հանդիսանում է իմ չարաբաստիկ ախոյանը: Չէ՞ որ, եթե այդ բժիշկը չլիներ, իմ կյանքը ամենաերջանիկ ձևով կընթանար: Ինքներդ պատկերացրեք, ի՞նչս է պակաս: Առայժմ երեխաներ չունենք: Կինս գեղեցկուհի է, խելացի, ծնողների միակ զավակը: Եթե նրանք մեռնեն՝ հարյուր քսան տարի հետո[3] նրանց ամբողջ հարստությունը կանցնի նրան, այսինքն՝ ինձ: Եվ հենց հիմա էլ, թո՛ւ, թո՛ւ, աչքով չտամ, ես արդեն բավականին հարգանք վայելում եմ: Երբ որ հյուր ենք գնում, ինձ որպես հարուստի փեսայի միշտ էլ նստեցնում են պատվավոր տեղում, տոներին, ժամասացության ժամանակ միշտ էլ բոլորից առաջ՝ աներոջս ետևից ես եմ գնում: Ոչ թե ամենից առաջ, համենայն դեպս, կանտորից, ռաբբիից հետո: Իսկ հետո, միայն մնացյալները: Եվ նույնիսկ, ներեցեք արտահայտությանս համար, բաղնիսում էլ եմ նույն վերաբերմունքին արժանանում: Հազիվ եմ շորերս սկսում հանել, որ բաղնեպանը արդեն սկսում է գոռալ. «Մի կողմ անցե՛ք, ժողովուրդ: Դռան մոտից հեռու գնացեք: Մեր հարուստի փեսան գալիս է լողանա»: Ո՛չ, բաղնեպանի խոսքերը ինձ հաճելի չեն, ես այդպիսի

[3] Երկարակեցության հրեական մաղթանք:

ուշադրություն չեմ սիրում: Բայց ի՞նչ կնշանակի — չեմ սիրում: Շողոքորթություն, դե ո՞վ չի սիրում, և երբ պատիվ են տալիս, դրանից ոչ ոք չի հրաժարվում: Բայց թե գիտեմ, որ դեռևս դրան արժանի չեմ: Այո՛, աներս հարուստ աղա է: Եվ թող մարդիկ էլ ոտները լիզեն: Վայրենիներ են, ուրիշ ոչինչ, ուղղակի ասում եմ: Իսկ ես այդտեղ ինչացո՞ւ եմ: Մանավանդ որ թեկուզ հենց վերցնենք աներոջս: Քանի որ հիմա ինձ չի կարող լսել, ուստի կարող եմ ասել, նա ստոր է: Նրա հետ, ախր, ոչ մի բանից խոսել չես կարող: Իսկ աղջիկը նրանց միակ դուստրն է: Հենց մի բան է լինում թե չէ, իրեն գցում է անկողնուն ու հեծկլտում: Եվ այդ ժամանակ, ինչպես ձեզ ասացի, աներս կառք է ուղարկում այն նոր բժշկի ետևից, ա՛յ իզն ու թոզը վերանա, հա՛: Ա՛խ, հավատացեք ինձ, կյանքս դառնում է անտանելի, երբ միտքս է ընկնում այդ բժիշկը: Հենց այդ ժամանակ է, որ ուզում եմ դանակը վերցնել ու ինձ մորթել կամ էլ վազել գետն ու խեղդվել:

Երիտասարդը տխրեց, մտքի մեջ ընկավ:

Այդտեղ ես աշխատելով որքան կարող եմ ամենաանմեղ խոսքերն ընտրել, ասացի.

— Նշանակում է, դուք, այսպես ասած, կասկածում եք, որ ձեր կինը…

Իմ այցելուն խաշվածի նման աթոռից ցատկեց.

— Աստվա՛ծ ազատի՛,— բացականչեց նա:— Այդպիսի կասկածներ ես չունեմ: Ի՞նչ եք ասում: Նա չէ՞ որ հրեա աղջիկ է: Նա մի անարատ երեխա է… Ես խոսում եմ բժշկի մասին, այդ նշանավոր բժշկի, ա՛յ տեսնեմ՝ վառվի, փոթրվի: Եվ գլխավորն այն է, որ կրակը լափի նրա հորը, այդ շիլ ողորմելի դերձակին, որ իր բամբակե կապան հագած քարշ է գալիս ամեն տեղ: Քարշ է գալիս, ճղճղում ու թմբկահարում ամբողջ քաղաքով մեկ: Դուք հավանաբար մտածում եք, որ նա ինչ-որ խելացի բաներ է ասում: Չէ, նրա դուրս տվածը ցանցառություն է, ամեն տեսակի սուտուփուտ բաներ: Նրա լեզուն երկար է, դրա համար էլ դուրս է տալիս: Դա ինձ այնքան է դիպչում, որքան անցյալ տարվա ձյունը: Բայց ցավն այն է, որ մարդ արարածս ականջներ ունի: Ականջներն էլ սիրում են լսել, և երբ որ մի լավ լսում ես, այնպիսի բաներ ես լսում, որ իսկի չէիր ուզի լսել: Այս էլ ասեմ, քանի որ պետք է գիտենաք մեր ավանը, որը հռչակված է ամբողջ աշխարհում երկար լեզուներ ունեցող բանսարկուների ու խառնակիչների առատությամբ: Ասեմ ավելին. եթե մարդ ընկնի նրանց լեզվի տակ, նա կարող է հրաժեշտ տալ կյանքին… Երեսիս նրանք ոչինչ չեն ասում, բայց ետևիցս այնպիսի բաներ են ասում, որ ես արդեն սկսեցի շուրջս նայել ու ականջներս սրել: Ես սկսեցի որսալ բժշկի ամեն մի բառը, երբ որևէ բանից սկսում էր խոսել կնոջս հետ: Չէ, առանձնապես ոչ մի բան չեմ տեսել և ոչ էլ որևէ բան որսացել նրանց խոսակցությունից: Միակ բանը, որ ես նկատել եմ, այս է. կինս միանգամայն այլ մարդ է դառնում, երբ նա գալիս է: Նրա դեմքը, նրա աչքերը միանգամայն փոխվում են, այսինքն՝ նա նույն մարդն է մնում, ինչ որ էր: Բայց նրա աչքերում հանկարծ բռնկվում է մի ինչ-որ փայլ: Եվ դեմքին էլ հայտնվում է մի այլ արտահայտություն, ո՛չ այն արտահայտությունը, ինչ ունենում է իմ ներկայությամբ: Ես մի անգամ կնոջս հարցրի. «Ասա ինձ, հոգյակս, այդ ինչից է, որ դու միանգամայն այլ մարդ ես դառնում, երբ նա այցելում է քեզ»: Ո՛չ, դուք երբեք այդ չեք գուշակի, թե նա դրան ինչ պատասխանեց: Նա ոչինչ չպատասխանեց: Նա միայն ծիծաղեց, ծիծաղեց մի այնպիսի ոչնչացնող ծիծաղով, որ ես մտածեցի — գետինը կմտնեմ: Դրանից հետո հեկեկալով իրեն գցեց մահճակալին և գիտակցությունը կորցրեց: Այստեղ, իհարկե, վազեց եկավ զոքանչս՝ իր թրքական շալով: Սկսեցին ուշքի բերել: Իսկ աներս կարգադրեց լծել կառքը և հենց ինձ ուղարկեց նոր բժշկի ետևից: Եվ երբ բժշկին բերեցի, կինս հանկարծ իրեն լավ զգաց: Նրա աչքերը նորից փայլեցին, ինչպես ադամանդը արեգակի տակ: Եվ այտերին էլ վարդեր դուրս եկան… Այո, բայց դուք պատկերացրեք իմ վիճակը, երբ ես ստիպված էի լինում գնալ նրա տունը և կառքով բերել մեզ մոտ: Իսկ ինձ, միգուցե ավելի հեշտ էր դժոխք գնալ, քան նրա բնակարանը: Դուք հալա տեսնեիք նրա մռութը: Կարմի՛ր, բազուկը քեզ օրինակ, և ամբողջովին ծածկված պզուկներով, ընդ որում անվերջ ժպտում է: Նա ինձ դիմավորում է մի առանձնահատուկ ժպիտով: Ինձ հետ նա վարվում է այնպիսի քաղցրությամբ, ինչպես շաքարը և այնպիսի փափկությամբ, ինչպես սպեղանին, որ դրված է չիբանին: Նրա բարեհամբույր վարմունքը իմ հանդեպ, ես կասեի, անսահման է: Երբ ես ինչ-որ մի անգամ հիվանդացա մի հիվանդությամբ՝ ինֆլյուենցիայով, որ շատ մոդա էր, նա այնպես էր ջանում, որ ես լավանամ, որ նույնիսկ դուրս չեկավ: Եվ զարմանալի բան. որքան ուշադիր է ինձ, այնքան ատում

եմ նրան: Եվ թող աստված ինձ ների, չեմ կարողանում նրան տեսնել: Հատկապես այն րոպեին, երբ նա նստած մեր տանը հայացքներ է փոխանակում կնոջս հետ: Ահա հենց այդ ժամանակ ինձ թվում է, թե ես կբռնեմ նրա օձիքից և դուրս կշպրտեմ: Դա կվերադարձներ իմ կորցրած առողջությունը: Բայց պարոն, ես, առանց դրա էլ, ինքս ինձ խոսք եմ տալիս վերջ տալ այդ ամենին: Հերիք է, որքան դիմացա նրա ժպիտներին ու հայացքներին, որ փոխանակում է մեր տանը կնոջս հետ, նրա կողքին նստած: Որքա՞ն կարելի է դիմանալ այս խայտառակությանը, ձե՛զ եմ հարցնում: Չէ՞ որ մեր քաղաքի բանսարկուներն ու խառնակիչները արդեն վաղուց են ինձնով զբաղվում: Ո՛չ, ես վճռական որոշում եմ կայացրել՝ նրանից բաժանվել: Ուրիշ ելք չունե՛մ: Բայց թե այդ ժամանակ ինձ մոտ մի միտք է ծագում. իսկ ի՞նչ օգուտ կունենամ դրանից, եթե բաժանվեմ: Բայց մյուս կողմից էլ մտածում եմ՝ աներս հարուստ է, կինս էլ նրա միակ աղջիկը, նրանց ունեցած-չունեցածը իմը կլինի: Բայց հենց այդտեղ ասում եմ. «Գրողի ծո՛ցը գնա ամեն ինչ, ինչ ուզում է լինի կբաժանվեմ, ուրիշ ճանապարհ չկա»: Իսկ դուք ի՞նչ եք կարծում:

Իմ զրուցակիցը շունչ քաշեց, դեմքը մաքրեց և խոնարհ նայեց ինձ, սպասելով, թե ինչ կպատասխանեմ: Ես ասացի.

— Այո, ինձ էլ է թվում, որ դուք ուրիշ ելք չունեք: Մանավանդ որ ձեր սերը երբեք չի կարելի ջերմ սեր անվանել: Հետո երեխաներ էլ չունեք: Եվ քաղաքի այդ բամբասանքները: Ձեր ինչի՞ն է հարկավոր այդ ամենը:

Այդ լսելով, իմ զրուցակիցը իր խղճահարություն առաջացնող փոքրիկ, սև աչքերով ինձ էր նայում և տենդորեն պտտեցնում հեծանվիկի անիվները: Հետո աթոռը ավելի մոտեցրեց ինձ, ծանր թառանչեց և նորից խոսեց:

— Ահա դուք ասում եք՝ սեր: Ի՜նչ ասել այդ մասին: Ո՛չ, ես չեմ կարող ասել, թե նրան չեմ սիրում: Եվ ինչի՞ համար, շնորհ արեք, նրան չսիրել: Պարզ է, որ ես նրան սիրում եմ: Եվ նույնիսկ շատ եմ սիրում… Իսկ այն, որ քաղաքը բամբասում է, Է՜հ, թող բամբասի, եթե դա նրան դուր է գալիս: Ո՛չ, պարոն, այդ չէ, որ բորբոքում է կրակը իմ հոգում: Միակ բանը, որ ես չեմ կարողանում տանել, դա սոսկ այն փաստն է, որ կինս ուրախանում է, երբ բժիշկը գալիս է: Ես ինձ հարց եմ տալիս. ինչո՞ւ նա վարդերես և ուրախ չի դառնում այն ժամանակ, երբ ինձ է տեսնում: Ինչո՞վ եմ, այսպես ասած, բժշկից վատ: Գուցե նրանով, որ նա բժիշկ է, իսկ ես՝ ոչ: Այո՛, բայց եթե իր ժամանակին ինձ էլ ուսումի տային, միգուցե ես էլ բժիշկ կդառնայի: Եվ մարդկանց կբուժեի ոչ վատ, քան նա: Հավատացեք խոսքերիս. ես, կարծում եք, միայն ա՞յդ բանում նրան կծալեի: Ահա այս մտքերը մասամբ տատանման մեջ են դնում ինձ՝ որոշումս ի կատար ածելու: Բայց իրականում ի՞նչ է տեղի ունեցել: Ինչո՞ւ պիտի ես նրանից բաժանվեմ: Հապա նոր բժի՞շկը: Կամ ինչպե՞ս անել, եթե արդեն ոչ թե այդ բժիշկը, այլ մի ուրիշ, մի ինչ-որ սատանա լույս ընկնի: Այդ որտե՞ղ է գրված, որ երիտասարդ կինը իրավունք չունի որևէ ծանոթ բժիշկ ունենալ: Դա առաջին: Իսկ երկրորդը, ես ձեզանից հարցնում եմ, ի՞նչ օգուտ պիտի ունենամ, եթե, համենայն դեպս, ես նրանից բաժանվեմ: Չէ՞ որ ես ոտքից գլուխ մի որբ եմ, առանց հարազատի, առանց բարեկամների: Ձեզ համար հեշտ է ասել — բաժանվի՛ր: Վերցրի ու բաժանվեցի, հետո՞: Նորից կդառնամ մի աղքատ տղա, որը պետք է նորից սկսի իր կյանքը, և որին հարկավոր է նորից ամուսնանալ որևէ մեկի հետ: Իսկ որտեղի՞ց գիտեմ, թե այդ նոր կինս ավելի լավը կլինի, քան սա է: Իսկ հանկարծ պատահի այնպես, որ սրանից էլ վատթար դժոխքն ընկնեմ: Ահա այդտեղ արդեն ես, այսպես ասած, ինձ վրա եմ հավաքում և գիտեմ, թե որն է իմ ցավը: Մանավանդ որ այդ ցավը, համենայն դեպս, որոշ չափով թագաժառանգ իշխանի վիշտ է, որին մի իքս քանակի տարուց հետո պատկանելու է ամեն ինչ: Իսկ հակառակ դեպքում — ի՞նչ: Հակառակ դեպքում ես նորից պետք է մտնեմ ամեն տեսակի գործարքների մեջ և այսպես ասած՝ սպեկուլյացիա անեմ իմ կյանքը: Իսկ կյանքը բախտախաղ է, հը՞: Այդպես չէ՞: Թե՞ ձեր կարծիքով բախտախաղ չէ:

Ես իմ այցելուին պատասխանեցի.

— Այո, մասամբ խաղ է, բախտախաղ: Եվ եթե այդպես մտածենք, ապա թերևս, դուք ավելի լավ կանեք, եթե չբաժանվեք և գործը վերջացնեք խաղաղությամբ:

Ինձ անձամբ դուր եկավ իմ պատասխանը, որը որոշակի ամբողջ գործը շրջեց հանուն խաղաղության: Ինձ մի րոպե նույնիսկ թվաց, թե մեր զրույցը արդեն մոտենում է ավարտին: Բայց ավա՛ղ: Իմ այցելուն սեղանի վրայից կատաղի խլեց հեծանվիկը և անիվները պտտելով, ուղղակի դեմքիս ասաց.

— Դուք ասում եք՝ հաշտվեմ նրա հե՞տ: Հապա բժի՛շկը, բժի՛շկը իր պզուկոտ մռութով գրողի փայ դառնա, պատառ-պատառ լինի: Հապա բժշկի հայրը՝ այդ շիլ դերձա՛կը: Այդ ողորմելի դերձակը առանց այդ էլ ոտքի տակ է տալիս քաղաքն ու թմբկահարում, թե իմ աներոջ աղջիկը պատրաստվում է ինձ ապահարզան տալ: Ո՛չ, դուք հասկանո՞ւմ եք, այդ ողորմելի դերձակի ամբողջ ստորությունը, որ թմբկահարում է այդ մասին: Պարզ է. հիմա ամբողջ քաղաքը գիտե, թե իմ ընտանեկան գործերը ինչ վիճակումն են: Բայց մյուս կողմից էլ ես ինքս ինձ հարց եմ տալիս. եթե ամբողջ քաղաքը գիտե, ուրեմն էլ ի՞նչ ունեմ կորցնելու: Այո՛, ուղղակի ասած, ոչինչ էլ չեմ կորցնում, եթե այդ դերձակ հայրիկը աշխարհով մեկ չավ է անում: Ներեցեք աֆորիզմիս համար, անպետքությունը անպետքություն էլ կմնա: Բայց մյուս կողմից էլ, եթե ամբողջ քաղաքը խոսում է իմ բաժանության մասին, ապա պատշա՞ճ բան է այլ որոշման մնալը: Ո՛չ, պարոն, ավա՛ղ, ես ուրիշ

ելք չունեմ, բացի բաժանումից: Հը՞: Այդպես չէ՞: Դուք ինչպե՞ս եք կարծում:

Ես իմ այցելուին պատասխանում եմ:

— Կարծում եմ, դուք ճիշտ եք: Եթե ամբողջ քաղաքը ձեր բաժանման հարցն է քննարկում, ապա դրանից բացի թեկուզ ինչպիսի որոշում էլ հանեք, դուք կգտնվեք ոչ պատշաճ վիճակում:

Իր աթոռով շարժվելով ինձ վրա, այցելուս համարյա թե գոռում է.

— Ըհը՛: Ուրեմն ձեր կարծիքով ես նրան անպայման պետք է ապահարզա՞ն տամ: Ո՛չ, պարոն, դուք լավ մտածեցեք այդ գործի շուրջը նախքան այն, որ այդպես անխոհեմ բաներ կասեք: Ահա՛, զորօրինակ դուք ռաբբի եք, և ես կնոջս հետ գալիս եմ ձեզ մոտ նրանից բաժանվելու: Բնականաբար, դուք ինձ կհարցնեք. «Ասա ինձ, երիտասարդ, ի՞նչ պատճառով ես բաժանվում քո կնոջից»: Զորօրինակ, ի՞նչ պատասխան պիտի ես տամ ռաբբիին: Ըստ ձեզ, ես պիտի պատասխանեմ. «Կինս նայում է բժշկին, իսկ բժիշկը՝ կնոջս»: Այդպիսի մի պատասխան մի՞թե իր մեջ որևէ միտք կարող է ընդգրկել: Ախր չէ՞ որ ուրիշ որևէ բան չեմ կարող նրան պատասխանել: Դրանից հետո ես էլ ինչպես պիտի երևամ աշխարհի առաջ, եթե դրա համար նրանից բաժանվեմ: Ախր ամեն մի մարդ էլ կասի, որ ես գժվել եմ, որ ես բաժանվել եմ գեղեցկուհի կնոջիցս հենց այն մոմենտին, երբ նրանց ամբողջ հարստությունը հարյուր քսան տարի հետո պատկանելու էր ինձ: Եվ հենց դուք էլ ինձ կասեք՝ դուք կատաղե՛լ եք, ցնդվե՛լ եք: Հը՞: Այդպես չէ՞:

— Այո՛, ես էլ եմ ասում՝ կատաղե՛լ եք, ցնդվե՛լ եք:

Այստեղ իմ զրուցակիցը այնքան մոտեցավ ինձ, որ մեր ոտքերը համարյա խառնվեցին միմյանց: Մի կողմ նետելով հեծանվիկը, որը կոտրվել էր, այցելուն ձեռքը գցեց թանաքամանին: Աղմկալից հառաչելով, նա արագ-արագ վրա տվեց:

— Այո՛, ձեզ համար հեշտ է ասել, թե ես կատաղել եմ: Կցանկանայի իմանալ, եթե մի այդպիսի պատմություն ձեզ հետ պատահեր, դուք ինչպե՞ս կվարվեիք: Ո՛չ, դուք մի րոպե մտածեցեք. ձեր աները ստոր է, զոքանչդ ման է գալիս թուրքական շալով և տղամարդու ձայնով քրթմնջում, կինդ ամբողջ ժամանակ բուժվում է բժշկի մոտ, իսկ ամբողջ քաղաքը մատը ցցած ձեզ վրա, երես առ երես, ասում է: «Այծի ամուսինը»: Դուք, պարոն, գիշերվա կեսին դուրս կցատկեիք անկողնուց և կփախչեիք ուր աչքդ կտրեր: Հը, ինչպե՞ս: Այդպես չէ՞, միթե:

Ես այցելուիս ասում եմ.

— Այո, դա այդպես է: Այո, թերևս ես էլ գիշերվա կեսին վեր կթռչեի, կբաժանվեի նրանից և կփախչեի ուր աչքս կտրեր:

Իմ այցելուն գոռում է վրաս.

— Ձեզ համար հեշտ է ասելը՝ վեր կթռչեի, կբաժանվեի կփախչեի ուր աչքս կտրեր: Փախա: Ո՞վ փախավ: Ո՞ւր փախավ: Գերեզմա՞ն, ինչ է: Ախր մի լավ խելքներիդ տվեք, նա միակ աղջիկն է: Նրա ունեցած-չունեցածը հարյուր քսան տարի հետո իմը կլինի: Դա ինչ է: Դա նույնպե՞ս, ըստ ձեզ, ոչինչ է: Իսկ դրան ավելացրեք կամ, ավելի ճիշտ, ինքներդ ձեզ հարցրեք. բանն ինչո՞ւմն է, ինչո՞ւ եմ թարսվել կնոջս հետ: Ո՛չ, փորձեցեք պատասխանել, ինչո՞ւ եմ թարսվել կնոջս հետ:

— Իսկապես որ,— հարցնում եմ իմ այցելուին,— ինչո՞ւ եք թարսվել ձեր կնոջ հետ:

— Ինչպե՞ս թե ինչու,— պատասխանում է նա:— հապա բժի՛շկը: Բժշկին դուք մոռացե՞լ եք: Այն օրվանից, ինչ նա սկսել է հաճախել մեր տունը, կնոջս տեսնել չեմ կարող:

— Այդ դեպքում դուք պետք է ձեր կնոջից բաժանվեք:

— Իսկ դրանից ի՞նչ շահ կունենամ,— գոռում է այցելուս:— Դե, մի րոպե ընդունենք, որ ես բաժանվեցի, ես ի՞նչ կանեմ այժմյան ծանր ժամանակներում: Ո՛չ, դուք ձեր գլուխը մի պրծացրեք, այլ խելացի եղեք և պատասխան տվեք:

— Կարծում եմ,— ասում եմ ես,— որ դուք չպետք է բաժանվեք.

— Ապահարզան չտա՞մ, իսկ բժիշկը… մինչև…

Ես ցանկանում եմ վերջ դնել մեր զրույցին, ուստի վճռաբար տոնով ասում եմ.

— Դուք պետք է նրանից բաժանվեք:

— Բաժանվե՞լ: Իսկ ի՞նչ օգուտ կունենամ դրանից:

— Դե ուրեմն մի բաժանվեք:

— Հապա բժիշկը…

Ես ձեզ չեմ կարող բացատրել, թե, իսկապես, ինձ հետ ինչ պատահեց: Երևում է արյունը խփեց գլուխս: Աչքերս մթնեցին: Համենայն դեպս, ինչ որ է, ես բռնեցի զրուցակցիս կոկորդից, սեղմեցի պատին և ոչ իմ ձայնով գոչեցի.

— Ապահարզա՛ն: Կնոջդ ապահարզա՛ն տուր, այլանդակի մեկը: Բաժանվի՛ր, բաժանվի՛ր: Բաժանվի՛ր:

.....

Մեր աղմուկի վրա ներս վազեց ամբողջ ընտանիքս: Այս ի՞նչ բան է: Ի՞նչ է կատարվում այստեղ:

Հեչ, կարծես ոչինչ էլ չի պատահել:

Բայց երբ նայեցի հայելուն և տեսա մեռելային դեմքս, ինքս ինձ չճանաչեցի:

Ես երկար սեղմում էի իմ այցելուի ձեռքը, ներողություն խնդրում և աղերսում մոռանալ այն, ինչ տեղի էր ունեցել մեր միջև: Ես նրան ասացի.

— Երբեմն պատահում է, որ մարդ մի ինչ-որ անհայտ պատճառով դուրս է գալիս իրենից…

Այցելուս չափից դուրս շփոթված էր, վախեցած և ամեն ինչում համաձայնում էր ինձ հետ: Նա համաձայն էր, որ մարդն իր գլխի տերը չէ և որ իսկապես երբեմն իրենից դուրս է գալիս:

Այնուհետև իմ այցելուն, քաղաքավարությամբ ու հարգալից, խոնարհ գլուխ տվեց և ձեռքերը տրորելով գնաց, ընդ որում նրբակիրթ ասելով.

— Չնեղանաք, որ ձեր ժամանակը խլեցի: Շնորհակալություն խորհուրդի համար: Ո՛ղջ եղեք:

— Գնաք բարով: Բայց ինչի՞ համար եք շնորհակալություն հայտնում: